**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ**

# Հ Ր Ա Մ Ա Ն

19 մայիսի 2025թ. թիվ 547

ՆԱԻՐԱ ԲԱՐԻԿՅԱՆԻՆ ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ (ԾԱԾԿԱԳԻՐ՝ 95-30.4-Ղ4-1) ՊԱՇՏՈՆՈՒՄ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 16-րդ մասով և 16-րդ հոդվածի 4-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 27-ի «Քաղաքացիական ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար մրցույթ անցկացնելու կարգը սահմանելու մասին» թիվ 1554-Ն որոշմամբ սահմանված կարգի 147-րդ և 151-րդ կետերով, ՀՀ առաջին փոխվարչապետի 2018 թվականի դեկտեմբերի 12-ի N 441-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 2.1-րդ կետով, հիմք ընդունելով 2025 թվականի մայիսի 16-ին մրցութային հանձնաժողովի կողմից տրված եզրակացությունը և հաշվի առնելով Ն.Բարիկյանի դիմումը՝

Հ ր ա մ ա յ ո ւ մ   եմ.

1. Նաիրա Լյովայի Բարիկյանին 2025 թվականի մայիսի 20-ից նշանակել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետի (95-30.4-Ղ4-1) պաշտոնում:

2. Ն.Բարիկյանի պաշտոնային դրույքաչափը սահմանել «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

19/05/2025

X

ԿԱՄՈ ԱՇՐԱՖՅԱՆ

Կ.ԱՇՐԱՖՅԱՆ

2025թ. մայիսի 19
ք.Վանաձոր

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ Կ.ԱՇՐԱՖՅԱՆԻՆ

Ղեկավարվելով 2018 թվականի դեկտեմբերի 27-ի թիվ 1554-Ն որոշմամբ սահմանված կարգի 146-րդ կետով՝ Ձեզ եմ ներկայացնում Լոռու մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետի (ծածկագիր՝ 95-30.4-Ղ4-1) թափուր պաշտոնը զբաղեցնելու համար անցկացված մրցույթի հարցազրույցի մասնակցի վերաբերյալ եզրակացությունը:

Առդիր՝ 1 էջ:

Հանձնաժողովի նախագահ՝ Կ.Աշրաֆյան

16.05.2025թ.

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

ՄՏԻՑ №

«____»________20 թ.

**Ձև N 4**

Եզրակացություն

ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետի (ծածկագիր՝ 95-30.4-Ղ4-1)

(համապատասխան մարմնի անվանումը, պաշտոնի անվանումը և ծածկագիրը)

թափուր պաշտոնն զբաղեցնելու համար անցկացվող մրցույթի հարցազրույցի մասնակցի վերաբերյալ

| հ/հ | Մասնակցի անունը, հայրանունը, ազգանունը | Մասնակցի անձնագրային տվյալները (սերիան, համարը, տրման ամսաթիվը, ում կողմից է տրվել, հանրային ծառայությունների համարանիշը) | Հարցազրույցի արդյունքում | | |
|---|---|---|---|---|---|
| | | | հնարավոր միավորների առավելագույն քանակը | մասնակցի ստացած միավորների քանակը | մասնակցի ստացած միավորները տոկոսով |
| 1. | Նաիրա Լյովայի Բարիկյան | AV0671547, 015779598 14.03.20232., 033-ի կողմից 6702820712 | 75 | 71 | 94,67 |

Հարցազրույցը հաղթահարել է ____________________
(անունը, հայրանունը, ազգանունը)

Հանձնաժողովի նախագահ՝ ____________________ ____________________
(ստորագրություն) (անունը, ազգանունը)

Հանձնաժողովի անդամներ՝ ____________________ ____________________
(ստորագրություն) (անունը, ազգանունը)

____________________ ____________________
(ստորագրություն) (անունը, ազգանունը)

____________________ ____________________
(ստորագրություն) (անունը, ազգանունը)

____________________ ____________________
(ստորագրություն) (անունը, ազգանունը)

16.05.2025թ